

ՄԵԼԻՔ ՄԵԼԻՔՅԱՆ

ՀՀ Վճռաբեկ դատարանի աշխատակազմի  
իրավական փորձաքննությունների ծառայության  
գլխավոր մասնագետի պաշտոնակատար,  
ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի քրեական իրավունքի ամբիոնի հայցորդ

MELIK MELIKYAN

Acting Chief Specialist of the Legal Expertise Service of the RA Court of Cassation  
PhD Student (Researcher), Chair of Criminal Law  
YSU, Faculty of Law

МЕЛИК МЕЛИКЯН

И.О. главного специалиста  
Службы правовой экспертизы  
Кассационного суда РА,  
Соискатель кафедры уголовного права  
юридического факультета ЕГУ

**ՀԱՆՅԱԳՈՐԾՈՒԹՅԱՆ ՊՐՈՎՈԿԱՑԻԱՅԻ ՔՐԵԱԻՐԱՎԱԿԱՆ  
ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ  
ԵՎՐՈՊԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ԵՎ ՀՀ ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆԻ ԿՈՂՄԻՑ  
ԱՐՏԱՀԱՅՏՎԱԾ ԻՐԱՎԱԿԱՆ ԴԻՐՔՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ  
ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ**

**CRIMINAL LEGAL FEATURES OF CRIME PROVOCATION IN THE  
CONTEXT OF THE LEGAL POSITIONS EXPRESSED BY THE EUROPEAN  
COURT OF HUMAN RIGHTS AND THE RA COURT OF CASSATION**

**УГОЛОВНО-ПРАВОВЫЕ ОСОБЕННОСТИ ПРОВОКАЦИИ  
ПРЕСТУПЛЕНИЯ В КОНТЕКСТЕ ПРАВОВЫХ ПОЗИЦИЙ,  
ВЫСКАЗАННЫХ ЕВРОПЕЙСКИМ СУДОМ ПО ПРАВАМ ЧЕЛОВЕКА  
И КАССАЦИОННЫМ СУДОМ РА**

Մարդու իրավունքների եվրոպական դատարանի (այսուհետ՝ նաև Եվրոպական դատարան) և ՀՀ Վճռաբեկ դատարանի կողմից կայուն նախադեպային իրավունքում ձևավորված իրավական դիրքորոշումները, որոնք վերաբերում են հանցագործության պրովոկացիայի և օպերատիվ-հետախուզական կամ քրեադատավարական գաղտնի գործողությունների (այսուհետ՝ Գաղտնի գործողություններ) հարաբերակցությանը, ծանրակշիռ դերակատարում կարող են ունենալ տվյալ գործողություններն իրականացնող անձի արարքներում հանցագոր-

ծության պրովոկացիայի տարրերի առկայությունը որոշելու և դրանց պատշաճ իրավական գնահատական տալու հարցերում:

Մարդու իրավունքների եվրոպական դատարանը հանցագործության պրովոկացիայի վերաբերյալ «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» Եվրոպական կոնվենցիայի (այսուհետ՝ նաև Եվրոպական կոնվենցիա) 6-րդ հոդվածի՝ արդար դատաքննության իրավունքի հայեցակետում, ի թիվս այլնի (inter alia) արձանագրել է, որ՝

- Ծայտյալ գործակալների օգտագործումը պետք է սահմանափակվի և պետք է երաշխիքներ նախատեսված լինեն նույնիսկ թմրանյութերի առևտրի դեմ պայքարին վերաբերող գործերում: Թեև կազմակերպված հանցավորության աճը, անկասկած, պահանջում է համապատասխան միջոցների ձեռնարկում, արդարադատության արդարացի իրականացումը, այնուամենայնիվ, էական տեղ է զբաղեցնում<sup>1</sup>,

- Կազմակերպված հանցավորության և կոռուպցիայի վերաբերյալ գործերով ընդունելի համարելով իշխանությունների՝ հատուկ քննչական մեթոդների դիմելու անհրաժեշտությունը, միաժամանակ նշվում է, որ համապատասխան աշխատակիցների կողմից ընտրված մեթոդները կիրառելիս առկա է ոստիկանության կողմից պրովոկացիայի դիմելու ռիսկ, հետևաբար՝ նրանց գործողությունները պետք է դուրս չգան որոշակի հստակ սահմանների շրջանակից<sup>2</sup>, ուստի ոստիկանությունը կարող է գաղտնի գործել, բայց ոչ սադրել<sup>3</sup>, քանի որ ժողովրդավարական հասարակությունում արդարադատության իրականացումը չպետք է զոհաբերվի հանուն նպատակահարմարության<sup>4</sup>:

Այս կապակցությամբ Եվրոպական դատարանը քրեական գործերով քննության ընթացքում իրավաչափ գաղտնի հնարքների օգտագործման թույլատրելի շրջանակի և Եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետը խախտող պրովոկացիայի միջև նյութական և դատավարական չափորոշիչների միջոցով սահմանել է այն իրավական բաժանարարը, որով կարող է կանխորոշվել իշխանության մարմինների, նրանց հետ համագործակցող կամ նրանց հրահանգմամբ գործող անձանց արարքներում հանցագործության պրովոկացիայի հատկանիշների առկայությունը<sup>5</sup>:

Որպես նյութական չափորոշիչ Եվրոպական դատարանը նախասահմանել է գործակալների կողմից՝ պասիվ ներգործության ընդհանուր սկզբունքը: Մասնավորապես, *Գրբան ընդդեմ Խորվաթիայի* գործով ընդգծվել է, որ կոնկրետ իրավիճակում գործակալի ներթափանցումը և մասնակցությունը չպետք է այնքան ընդարձակվի, որ գաղտնի գործակալը վերածվի պրովակատոր գործակալի (agents provocateurs): Այդ կապակցությամբ արձանագրվել է, որ կոնկրետ իրավիճակներում անձի նկատմամբ նշանակվող պատիժը պետք է արտացոլի միայն այն հանցագործությունը, որն ամբաստանյալը փաստացի պլանավորում էր կատարել<sup>6</sup>:

<sup>1</sup> Տե՛ս Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ *Delcourt v. Belgium* գործով 1970 թվականի հունվարի 17-ի վճիռը, գանգատ թիվ 2689/65, կետ 25:

<sup>2</sup> Տե՛ս Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ *Ramanauskas v. Lithuania* գործով 2008 թվականի փետրվարի 5-ի վճիռը, գանգատ թիվ 74420/01, կետ 55:

<sup>3</sup> Տե՛ս Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ *Khudobin v. Russia* գործով 2006 թվականի հոկտեմբերի 26-ի վճիռը, գանգատ թիվ 59696/00, կետ 128:

<sup>4</sup> Տե՛ս վերը նշված՝ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ *Ramanauskas v. Lithuania* գործով վճռի 53-րդ կետը:

<sup>5</sup> Տե՛ս Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ *Matanović v. Croatia* գործով 2017 թվականի նոյեմբերի 23-ի վճիռը, գանգատ թիվ 2742/12, կետ 122 և վերը նշված՝ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ *Ramanauskas v. Lithuania* գործով վճռի 55-րդ կետը:

<sup>6</sup> Տե՛ս Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ *Grba v. Croatia* գործով 2017 թվականի նոյեմբերի 23-ի վճիռը, գանգատ թիվ 47074/12, կետեր 102-103:

Ի տարբերություն քրեական գործերով քննության ընթացքում իրավաչափ գաղտնի հնարքների օգտագործման թույլատրելի շրջանակի, պրովոկացիան Եվրոպական դատարանի մոտեցմամբ սահմանվել է մի իրավիճակ, որին թե՛ համապատասխան աշխատակիցները, և թե՛ նրանց հրահանգներով գործող անձինք, ոչ թե սահմանափակվում են հանցավոր գործունեությունն, ըստ էության, պասիվ կերպով քննելով, այլ՝ հանգեցնում են այնպիսի դրության, երբ անձը կատարում է այնպիսի հանցանք, որը մինչ այդ չէր կատարի<sup>7</sup>:

Պասիվ միջամտության հրամայականի կոնտեքստում՝ Եվրոպական դատարանը նշել է նաև այն ընդհանուր կանոնները, որոնցով դատարանն առաջնորդվում է միջամտության «պասիվությունը» գնահատելիս: Մասնավորապես, այդպիսիք են՝ գաղտնի գործողության հիմքում ընկած պատճառների ու այն իրականացնող աշխատակիցների վարքագծի ուսումնասիրությունը, ինչպես նաև ենթադրյալ հանցագործություն կատարման կամ նախամտադրման մասին օբյեկտիվ և հիմնավորված կասկածների առկայության պարզումը<sup>8</sup>, ընդ որում՝ նախկին դատվածության առկայությունն ինքնին հանցանք կատարելու նախատրամադրվածության ցուցիչ համարվել չի կարող<sup>9</sup>:

Զարգացնելով իր նախկինում արտահայտված դիրքորոշումները՝ Եվրոպական դատարանը *Տեյքսեյրա դե Կաստոն ընդդեմ Պորտուգալիայի* գործով, պրովոկացիայի առկայությունը գնահատելիս, ի թիվս այլ գործոնների, հաշվի առավ այն հանգամանքը, որ գործակալների գործողությունները գաղտնի գործակալների գործողությունների շրջանակից դուրս են եկել, քանի որ նրանք անձին դրդել են իրավախախտման, և որևէ հիմք չի եղել ենթադրելու, որ առանց նրանց միջամտության նշված իրավախախտումը կկատարվեր<sup>10</sup>:

Մյուս նյութական բաղադրիչը, որ Եվրոպական դատարանը հաշվի է առել քրեական գործերով քննության ընթացքում իրավաչափ գաղտնի հնարքների օգտագործման թույլատրելի շրջանակի և Եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետը խախտող պրովոկացիայի միջև, հանդիսացել է գանգատաբերի վրա ճնշում գործադրելու փաստի գնահատումը:

Այսպես, գանգատաբերի հետ կապի հաստատման գործակալների նախաձեռնությունը, այն պարագայում, երբ վերջինիս՝ հանցավոր գործունեության մեջ գտնվելու կամ այդպիսի կանխատրամադրվածություն ունենալու մասին օբյեկտիվ տեղեկությունները բացակայել են, դիտվել է որպես նրա նկատմամբ գործադրված ճնշում<sup>11</sup>: Ճնշման գործադրում է համարվել նաև դա կրկնելը, այն դեպքում, երբ անձի կողմից ստացվել է մերժում<sup>12</sup>:

Հաջորդ նյութական գործոնը՝ անձի, ում նկատմամբ իրականացվում է Գաղտնի գործողությունը, հետ կապ հաստատելու հարցում նախաձեռնություն ցուցաբերելն է: Սա վերաբերում է այն դեպքերին, երբ չի եղել որևէ օբյեկտիվ կասկած առ այն, որ անձը ներգրավված է

<sup>7</sup> Տե՛ս վերը նշված՝ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ *Ramanauskas v. Lithuania* գործով վճռի 55-րդ կետը:

<sup>8</sup> Տե՛ս Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ *Bannikova v. Russia* գործով 2010 թվականի նոյեմբերի 4-ի վճիռը, գանգատ թիվ 18757/06, կետ 53:

<sup>9</sup> Տե՛ս Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ *Constantin and Stoian v. Romania* գործով 2009 թվականի սեպտեմբերի 29-ի վճիռը, գանգատներ թիվ 23782/06 և 46629/06, կետ 55:

<sup>10</sup> Տե՛ս Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ *Teixeira de Castro v. Portugal* գործով 1998 թվականի հունիսի 9-ի վճիռը, գանգատ թիվ 44/1997/828/1034, կետեր 37-38:

<sup>11</sup> Տե՛ս Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ *Burak Hun v. Turkey*, գործով 2009 թվականի դեկտեմբերի 15-ի վճիռը, գանգատ թիվ 17570/04, կետ 44, ինչպես նաև *Sepil v. Turkey* գործով 2013 թվականի նոյեմբերի 12-ի վճիռը, գանգատ թիվ 17711/07, կետ 34:

<sup>12</sup> Գործով 2017 թվականի նոյեմբերի 23-ի վճիռը, գանգատ թիվ 2742/12, կետ 122 և վերը նշված՝ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ *Ramanauskas v. Lithuania* գործով վճռի 55-րդ կետը:

<sup>13</sup> Տե՛ս վերը նշված՝ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ *Ramanauskas v. Lithuania* գործով վճիռը, կետ 67:

եղել հանցավոր գործունեության մեջ կամ նախատրամադրված է եղել կատարելու քրեական իրավախախտում<sup>13</sup>:

Այս համատեքստում, Եվրոպական դատարանը կոնկրետ գործով արձանագրել է, որ չնայած նրան, որ ոստիկանությունն ազդել էր դեպքերի ընթացքի վրա, մասնավորապես՝ տեխնիկական սարքավորումեր տալով մասնավոր անձին խոսակցություններ ձայնագրելու համար և աջակցելով գանգատաբերին ֆինանսական շարժառիթ տալու առաջարկին, այնուամենայնիվ ոստիկանության գործողությունները բխում էին հանցավոր գործունեությանը միանալով, այլ ոչ թե նախաձեռնելով: Մասնավորապես, գանգատաբերի դեմ հատուկ գործողությունների կատարումը՝ գլխավոր դատախազի վերահսկմամբ արդեն իսկ եղել էր սկսված այն ժամանակ, երբ նրա դեմ կաշառք պահանջելու փաստի առթիվ ներկայացված էր հաղորդում<sup>14</sup>:

Ինչ վերաբերում է դատավարական չափորոշիչին, ապա Եվրոպական դատարանն ամրագրել է հստակ և կանխատեսելի ընթացակարգերի առկայությամբ իրականացվող վերահսկողությունը, որի կոնտեքստում արձանագրել է գանգատաբերների արդար դատաքննության հիմնարար իրավունքի խախտումներ, երբ գործակալների կողմից կատարված գործողությունները զուրկ են եղել դատախազական կամ դատական հստակ և կանխատեսելի ընթացակարգերի առկայությամբ իրականացվող վերահսկողությունից<sup>15</sup>:

Այսպիսով, հարկ է ընդգծել, որ Եվրոպական դատարանն իր՝ վերը թվարկված որոշումներով սահմանել է համապատասխան վավերապայմաններ, որով հնարավոր է սահմանազատել իշխանության մարմինների, նրանց հետ համագործակցող կամ նրանց հրահանգմամբ գործող անձանց կողմից իրավաչափ Գաղտնի գործողության իրականացումը հանցագործության պրովոկացիայից:

Եվրոպական դատարանի կողմից կայուն նախադեպային իրավունքում ձևավորված դիրքորոշումների ոգով *Գառնիկ Գալստյանի* գործով՝ Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ հանցագործության պրովոկացիան իրենից ներկայացնում է իշխանության ներկայացուցիչների (նրանց հետ համագործակցող կամ նրանց հրահանգմամբ գործող անձանց) կողմից իրականացված գործողություններ, որոնք դուրս են գալիս զգալիորեն պասիվ ըննության շրջանակներից՝ պայմանավորելով անձի կողմից հանցագործություն կատարելու նախաձեռնության ձևավորումը, որպեսզի հնարավոր դարձնեն հանցագործության հաստատումը, այն է՝ ապահովեն ապացույցներ և հարուցեն<sup>16</sup>:

Այսպիսով, զուգակցելով Եվրոպական դատարանի և Վճռաբեկ դատարանի մոտեցումները, կարել է փաստել, որ որպես Գաղտնի գործողությունների և հանցագործության պրովոկացիայի սահմանազատման, ինչպես նաև տվյալ գործողությունների իրավաչափությունից՝ պրովոկացիայի վերաճելու պարագայում իրավական գնահատական տալու համար որպես գործիքներ կարող են ծառայել հետևյալ չափանիշները.

1) Իշխանության մարմինների, նրանց հետ համագործակցող կամ նրանց հրահանգմամբ գործող անձանց պասիվ ներգործության և նրանց կողմից ճնշում գործադրելու արգել-

<sup>13</sup> Տե՛ս վերը նշված՝ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ *Burak Hun v. Turkey*, գործով՝ վճիռը, կետ 44, *Sepil v. Turkey* գործով՝ 2013 թվականի նոյեմբերի 12-ի վճիռը, գանգատ թիվ 17711/07, կետ 34:

<sup>14</sup> Տե՛ս Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ *Miliniene v. Lithuania* գործով՝ 2008 թվականի հունիսի 24-ի վճիռը, գանգատ թիվ 74355/01 կետեր 37-38:

<sup>15</sup> Տե՛ս վերը նշված՝ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ *Teixeira de Castro v. Portugal* գործով՝ վճիռը, կետ 38, *Ramanauskas v. Lithuania* գործով՝ վճիռը, կետ 51, ինչպես նաև *Tchokhonelidze v. Georgia* գործով՝ վճիռը, գործով՝ 2018 թվականի հունիսի 28-ի վճիռը, գանգատ թիվ 31536/07, կետ 51:

<sup>16</sup> Տե՛ս, *mutatis mutandis* Վճռաբեկ դատարանի՝ *Գառնիկ Գալստյանի* գործով՝ 2014 թվականի դեկտեմբերի 16-ի թիվ ԵՄԴ/0027/01/14 որոշման 15-րդ կետը:

քի սկզբունքները, որոնք հարաբերակցելով քրեական իրավունքի՝ արարքի օբյեկտիվ կողմի հատկանիշներին, կարելի է արձանագրել, որ Գաղտնի գործողությունները չպետք է ուղեկցվեն անձի նկատմամբ ակտիվ ձեռնարկումներով,

2) Գաղտնի գործողություն իրականացնող սուբյեկտի կողմից նախաձեռնություն ցուցաբերելու արգելքը, ինչի հիման վրա կարելի է փաստել, որ Գաղտնի գործողություն իրականացնող անձի մոտ սուբյեկտիվ կողմից ի սկզբանե, երբ հայտնի չէ տվյալ առ այն, որ անձը նախատրամադրված է եղել կատարելու քրեական իրավախախտում, չպետք է միտումներ լինեն համապատասխան միջոցներով ներգործելու տվյալ անձի նկատմամբ,

3) Իշխանության մարմինների, նրանց հետ համագործակցող կամ նրանց հրահանգմամբ գործող անձանց կողմից կատարվող Գաղտնի գործողությունների օրինականությունը և դրանց նկատմամբ սահմանված իրականացվող վերահսկողությունը, որի բացակայությունն էապես բարձրացնում է այն իրականացնող սուբյեկտի հակաիրավական վարքագծի և հանրային վտանգավորության սանդղակը:

Կայուն նախադեպային իրավունքում արտահայտված վերը հիշյալ իրավական դիրքորոշումների լույսի ներքո, հարկ է ընդգծել, որ պրովոկացիայի ժամանակ հանցագործության կատարումը չի հանդիսանում այն կատարող անձի կամարտահայտության արդյունք և տվյալ դեպքում հանցանքի կատարմամբ առավելապես շահագրգռված են անձին՝ որոշակի նպատակների հետապնդմամբ, հանցագործության մղող սուբյեկտները:

Թերևս այս ոգով Եվրոպական դատարանն ավելի զարգացրեց իր նախկինում ընդունված որոշումների տրամաբանությունը և քննարկման առարկա դարձրեց հանցագործության պրովոկացիայի՝ որպես հանցանքի դրդող գործոնի թեզը, որը «նյութականություն» հաղորդեց մինչ այդ՝ քրեադատավարական հայեցակետում արտահայտված՝ հանցագործության պրովոկացիայի վերաբերյալ դրույթներին:

Մասնավորապես, Պասյանն ընդդեմ Հայաստանի գործով Եվրոպական դատարանը կրկնելով իր այն դիրքորոշումը, որ գաղտնի գործակալների գործողությունների արդյունքում, դրդչություն է տեղի ունենում, երբ ներգրավված ծառայողները, չեն սահմանափակվում հանցավոր գործունեությունն էապես պասիվ կերպով քննելով, այլ հանցանքի կատարումը հաստատված համարելու հնարավորություն ստեղծելու նպատակով այնպես են ազդում սուբյեկտի վրա, որ դրդում են այնպիսի հանցանք կատարել, որն այլապես չէր կատարվի, տվյալ գործով արձանագրեց, որ ԱԱԾ-ն պարզապես չի «միացել» տեղի ունեցող հանցանքին, նրանք դրդել են դրա կատարումը և անձը, որը գործել է նրանց անմիջական հսկողության և վերահսկողության ներքո դուրս է եկել գաղտնի գործակալի դերի շրջանակից և վերաձվել է *պրովակատոր գործակալի (agents provocateurs)*<sup>17</sup>:

Այսպիսով, վերը նշյալ մոտեցմամբ հանցագործության պրովոկացիայի՝ հանցանքի մղման երանգն էլ ավելի խտացվեց, և ընդգծվեց դրա՝ առավել ինտենսիվ ներգործության ձև համարվելու հատկանիշը, ինչից էլ հետևում է, որ պրովոկացիայի առկայության արձանագրումը ոչ միայն քրեադատավարական կամ օպերատիվ-հետախուզական գործունեությունը կանոնակարգող դրույթներին է վերաբերում, այլև Գաղտնի գործողություն իրականացնող սուբյեկտի գործողություններին քրեաիրավական գնահատական տալու հարցում ունի առանցքային նշանակություն:

Թերևս, նշվածի համատեքստում հատուկ դիտարկման է արժանի գիտական այն տեսա-

<sup>17</sup> Տե՛ս, *mutatis mutandis*, Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ *Papayan v. Armenia* գործով 2021 թվականի դեկտեմբերի 21-ի վճիռը, գանգատ թիվ 53166/10, կետեր 80 և 88:

կետը, որ պրովոկացիայի գործադրումը «արդարացված» կարող է լինել միայն այն դեպքում, երբ դա հանդիսանում է վերջին միջոցը բացահայտելու այն հանցավոր մտադրությունները, որոնք կարող են հիմք հանդիսանալ ծանր հանցագործությունների կատարման համար<sup>18</sup>:

Նման դիրքորոշումն էլ ավելի է ամրապնդվում՝ պայմանավորված նրանով, որ ՀՀ քրեական օրենսգրքի 41-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ քրեական պատասխանատվության ենթակա չէ քրեական օրենքով պաշտպանվող շահերին վնաս պատճառած այն անձը, որն օրենքով սահմանված կարգով համագործակցել է օպերատիվ-հետախուզական գործունեություն իրականացնող մարմինների հետ՝ հանցագործությունը բացահայտելուն, կանխելուն կամ ապացույցներ ձեռք բերելուն աջակցելու նպատակով տրված հանձնարարության սահմաններում, եթե այդ նպատակին հասնելու համար վնաս պատճառելու հետ չկապված միջոցները բացակայել են, այսինքն՝ այն հանդիսացել է վերջին միջոցը:

Ընդհանրապես, «վերջին միջոցի» պայմանի, և այդ համատեքստում՝ գործադրվող միջոցառման և մասնավոր շահի միջև ներդաշնակ հավասարակշռության ապահովելու և հակակշռող գործոնների վերաբերյալ Եվրոպական և Վճռաբեկ դատարանների կողմից ձևավորվել են մի շարք իրավական դիրքորոշումներ:

Մասնավորապես, Մարդու իրավունքների Եվրոպական դատարանը նշել է, որ «[Ե]րբ (...) հավասարակշռության էր բերվում մի կողմից՝ գաղտնի հսկողության միջոցների օգնությամբ անվտանգությունը պաշտպանելու պարասխանող պետության շահը, իսկ մյուս կողմից՝ դիմումատուի անձնական կյանքը հարգելու իրավունքի իրացման նկատմամբ միջամտության լրջությունը, իրավասու ազգային մարմիններն ունեն սեփական հայեցողության որոշակի լուսանցք պատշաճ այն միջոցների ընտրության հարցում, որոնք կօգտագործվեն ազգային անվտանգության պաշտպանության օրինական նպատակին հասնելու համար: Այդուհանդերձ, [ըստ Մարդու իրավունքների Եվրոպական դատարանի՝] պետք է գոյություն ունենան չարաշահումներից զերծ պահող բավարար և արդյունավետ երաշխիքներ: Այսպիսով, դատարանը հաշվի է առնում գործի բոլոր հանգամանքները, օրինակ՝ հնարավոր միջոցառումների բնույթը, տարածման տիրույթը և տևողությունը, դրանց կարգադրման համար պահանջվող պարտաճանաչները, դրանց թույլատրելու, կատարելու և հսկելու իրավասություն ունեցող մարմինները, ինչպես նաև՝ ներպետական իրավունքով նախատեսված իրավական պաշտպանության միջոցի տեսակը»<sup>19</sup>:

Վճռաբեկ դատարանն այս դեպքում սահմանելով «ներքին դիտում» օպերատիվ-հետախուզական միջոցառման կիրառելիության լեգիտիմության չափանիշները՝ արձանագրել է հետևյալը. «Հաշվի առնելով, որ [«ներքին դիտում»] գործողության իրականացմամբ լուրջ միջամտություն է տեղի ունենում անձի անձնական և ընտանեկան կյանքի գաղտնիության իրավունքին՝ օրենսդիրն ամրագրել է, որ այն կարող է իրականացվել բացառապես երբ՝

(...)

բ) եթե կան հիմնավոր ապացույցներ, որ այլ եղանակով օպերատիվ-հետախուզական միջոցառումն անցկացնող մարմնի կողմից օրենքով իր վրա դրված խնդիրների իրականացման համար անհրաժեշտ տեղեկատվության ձեռքբերումն անհնարին է:

Հարկ է ընդգծել, որ վերջին չափանիշի ամրագրմամբ օրենսդիրն *inter alia* սահմանել

<sup>18</sup> Տե՛ս *Говорухина Е. В.*, Понятие и правовые последствия провокации в уголовном праве: дис. ... канд. юрид. наук: 12.00.08 / Говорухина Елена Владимировна. - Ростов-на-Дону, 2002, էջ 70:

<sup>19</sup> Տե՛ս Մարդու իրավունքների Եվրոպական դատարանի՝ *Roman Zakharov v. Russia* գործով 2015 թվականի դեկտեմբերի 4-ի վճիռը, գանգատ թիվ 47143/06, կետ 232, *Irfan Guzel v. Turkey* գործով 2017 թվականի փետրվարի 7-ի վճիռը, գանգատ թիվ 35285/08, կետ 85:

է, որ նշված միջոցառումը կարող է իրականացվել միայն որպես ծայրահեղ (վերջին) միջոց (last resort), երբ այլընտրանքային եղանակով անհնարին է առաջադրված խնդիրների լուծման համար անհրաժեշտ տեղեկատվության ձեռքբերումը: Այսինքն՝ նշված միջոցառումը ոչ միայն պետք է իրականացվի դրա բնույթին և նպատակային նշանակությանը համապատասխան, այլ նաև այն դեպքում, երբ բացակայում են անձի իրավունքների և ազատությունների ոլորտ նվազ միջամտության եղանակով նույն տեղեկությունների ձեռքբերման այլ միջոցներ, այդ թվում՝ քրեական գործով վարույթի շրջանակում քրեական դատավարության օրենսգրքով կոնկրետ տեղեկությունների ձեռքբերման համար նախատեսված միջոցները<sup>20</sup>:

Նախորդիվ շարադրվածը հարաբերակցելով Գաղտնի գործողությունների կատարման ընթացքում իշխանության մարմինների, նրանց հետ համագործակցող կամ նրանց հրահանգմամբ գործող անձանց արարքներում իրավաչափ գործելու երաշխիքներ հանդիսացող, հետևաբար նաև քրեաիրավական գնահատականի տեսանկյունից էական համարվող՝ արդեն իսկ թվարկված՝ 1) պասիվ ներգործության, 2) ճնշում գործադրելու կամ նախաձեռնություն ցուցաբերելու արգելքի, 3) կատարվող գործողությունների օրինականության և դրանց նկատմամբ սահմանված իրականացվող վերահսկողության սկզբունքներին, կարելի է արդարացված համարել նաև տվյալ անձանց կողմից անձի նկատմամբ ներգործություն ցուցաբերելու՝ որպես ծայրահեղ (վերջին) միջոցի (last resort) պայմանը, որի պարագայում՝ այն իրագործելու համար հիմք հանդիսացող պատճառները պետք է լինեն բավարար չափով հիմնավորված, իսկ Գաղտնի գործողություն իրականացնող անձի գործունեության բնույթը, նպատակային նշանակությունը և օրենսդրությամբ առաջադրվող համաչափության պահանջները՝ ապահովված:

Վերը ներկայացվածը «տեղափոխելով» քրեական իրավունքի դաշտ՝ պետք է շեշտել, որ Գաղտնի գործողությունների կատարման ժամանակ հանցագործության պրովոկացիային առնչվող հիմնահարցերը պետք է դիտարկել երկու՝ (ա) իշխանության մարմինների կամ նրանց հետ համագործակցող անձանց գործակալական գործունեության ընթացքում իրավաչափ գործելու դեպքում քրեական պատասխանատվության բացառման և (բ) «Պրովոկատոր գործակալ» (agents provocateurs) հանդիսանալու դեպքում անհրաժեշտ ու պատշաճ քրեաիրավական գնահատականի տալու մեխանիզմների ասպեկտներով:

Առաջին դեպքում, արդեն իսկ հիշատակված՝ ՀՀ քրեական օրենսգրքի 41-րդ հոդվածի պայմաններում օրենսդրական ամրագրում ստացավ լեգիտիմ չափանիշներով երաշխավորված՝ քրեական օրենքով պաշտպանվող շահերին վնաս պատճառող անձին քրեական պատասխանատվությունից զերծ պահելու հնարավորությունը, ինչը վերոնշյալի պայմաններում արդարացիորեն պահանջված իրավակարգավորում էր:

Մինչդեռ, հարկ է նկատել, որ Գաղտնի գործողությունից հանցագործության պրովոկացիայի վերաճելու և հետևաբար «Պրովոկատոր գործակալի» (agents provocateurs) արարքներին քրեաիրավական գնահատելու տեսանկյունից, ՀՀ քրեական օրենսգրքում անհրաժեշտ է ներառել քրեական պատասխանատվություն նախատեսող նորմ, ինչի վերաբերյալ արդեն իսկ որոշակիորեն փորձ առկա է արտասահմանյան մի շարք երկրների քրեական օրենսդրություններում<sup>21</sup>՝ միաժամանակ դրա մեջ ընդգրկելով կայուն նախադեպային իրավունքում

<sup>20</sup> Տե՛ս Վճռաբեկ դատարանի՝ Գոռ Սարգսյանի գործով 019 թվականի ապրիլի 11-ի թիվ Ե-ԿԴ/0229/01/16 որոշման 17-րդ կետը:

<sup>21</sup> Տե՛ս Ղազախստանի Հանրապետության քրեական օրենսգրքի 412.1-րդ հոդվածը ([https://kodeksy-kz.com/ka/ugolovnyj\\_kodeks/412-1.htm](https://kodeksy-kz.com/ka/ugolovnyj_kodeks/412-1.htm) (01.07.2022թ.), Վրաստանի քրեական օրենսգրքի 145-րդ հոդվածը [https://www.legislationline.org/download/id/8541/file/Georgia\\_CC\\_2009\\_amOct2019\\_ru.pdf](https://www.legislationline.org/download/id/8541/file/Georgia_CC_2009_amOct2019_ru.pdf) (01.07.2022թ.):

ձևավորված վերը նշված նյութական և դատավարական երաշխիքները, որոնք խախտելու հետևանքով անձի համար վսասարար հետևանքներ առաջացնող և քրեական օրենսդրությամբ պաշտպանվող օրինական շահերին վնաս հասցնող հանրորեն վտանգավոր արարքի համար պետք է ամրագրվեն քրեաիրավական գնահատական տալու հստակ և կանխատեսելի իրավական մեխանիզմներ:

**Annotation.** The legal positions formed by the European Court of Human Rights and the RA Court of Cassation in stable case law, which refer to the relationship between the crime provocation and operational-investigative or criminal procedural secret operations, can have a significant role in the actions of the person carrying out the mentioned operations in the matters of determining the presence of elements and giving their proper assessment.

The points of view expressed in the article were based on doctrinal interpretations, experience of foreign countries, and stable case law formed in judicial practice, as a result it became possible to raise a number of issues related to the unique issue in question and make scientific proposals in connection with them.

**Аннотация.** Правовые позиции, сформированные Европейским судом по правам человека и Кассационным судом РА, в устойчивой судебной практике, касающейся соотношения провокации преступления и оперативно-разыскной или уголовно-процессуальной секретной операции, могут иметь значительное значение в действиях лица, проводящего указанные операции, в вопросах определения наличия элементов и дачи их надлежащей оценки.

Точки зрения, высказанные в статье, базировались на доктринальных толкованиях, опыте зарубежных стран и на устойчивом прецедентном праве, сформированном в судебной практике, в результате чего удалось поставить ряд вопросов, связанных с уникальностью рассматриваемого вопроса, и внести научные предложения в связи с ними.

**Բանալի բառեր** - Հանցագործության պրովոկացիա, նախադեպային իրավունք, գործակալ, պասիվ ներգործություն, նյութական և դատավարական չափորոշիչներ:

**Keywords:** crime provocation, case law, agent, passive influence, material and procedural standards.

**Ключевые слова:** Провокация преступления, судебная практика, агент, пассивное воздействие, материально-процессуальные нормы.

**Մեղիքյան Մ.** - ՀՀ Վճռաբեկ դատարանի աշխատակազմի իրավական փորձաքննությունների ծառայության գլխավոր մասնագետի պաշտոնակատար, ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի քրեական իրավունքի ամբիոնի հայցորդ, էլ. հասցե՝ melikmelikyan1994@gmail.com:

Ներկայացվել է խմբագրություն 04.07.2022 թ., տրվել է գրախոսության 04.07.2022 թ., երաշխավորվել իրավաբանական գիտությունների թեկնածու, դոցենտ Տիգրան Սիմոնյանի կողմից, ընդունվել է տպագրության 10.10.2022 թ.: